ՎԴ/11768/05/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26 հունվարի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Արթուր Մալխասյանի և Բելլա Հախվերդյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը (լոտի կոդ՝ 1486) ու այդ հիմքով 2021 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու Հայկ Գրիգորյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/11768/05/21 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունվարի 7-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արթուր Մալխասյանը և Բելլա Հախվերդյանը (այսուհետ՝ նաև Հայցվորներ) 2021 թվականի հոկտեմբերի 29-ին հայցադիմում են ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, որով պահանջել են անվավեր ճանաչել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը, որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել նաև 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը (լոտի կոդ՝ 1486) ու այդ հիմքով 2021 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը և Հայկ Գրիգորյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Ա.Ծատուրյան) 2021 թվականի նոյեմբերի 5-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերադարձնելու մասին:

3. Հայցվորները 2021 թվականի նոյեմբերի 16-ին հայցադիմումն ու կից փաստաթղթերը կրկին ներկայացրել են դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը, որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը (լոտի կոդ՝ 1486) ու այդ հիմքով 2021 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը և Հայկ Գրիգորյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը:

4. Վարչական դատարանը (դատավոր՝ Ա.Ծատուրյան) 2021 թվականի նոյեմբերի 22-ին որոշում է կայացրել հայցադիմումը Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Տվյալ դեպքում նկատի ունենալով հայցվորների կողմից ներկայացված հիմնական պահանջը և հաշվի առնելով հայցադիմումն ու կից փաստաթղթերի բովանդակությունը, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվորների կողմից հայցադիմումին կից ներկայացվել է «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը, Դատարանը գտնում է, որ կրկին ներկայացված հիմնական պահանջով հայցվորները վիճարկում են վերը նշված արձանագրությունը:*

Փաստորեն, որպես հիմնական պահանջ, հայցվորները պահանջում են անվավեր ճանաչել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը, որը չի հանդիսանում վարչական մարմինների կողմից իրականացված վարչարարություն (վարչական ակտ, գործողություն (ռեալ ակտ)):

(…)

Փաստորեն, հայցվորները հիմնական պահանջով պահանջում են անվավեր ճանաչել հաղթող մասնակից Հայկ Գրիգորյանի և հարկադիր կատարող Սմբատ Աթոյանի կողմից ստորագրված սակարկությունների արդյունքների մասին՝ «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը, որը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթի, ունի պայմանագրի ուժ: Սա նշանակում է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների հետևանքով նրա կողմից ոչ թե ընդունվել է վարչական ակտ, այլ սակարկություններում հաղթած անձի և սակարկությունների կազմակերպիչի՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից ստորագրվել է պայմանագրի ուժ ունեցող սակարկությունների արդյունքների

մասին «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը, ինչն էլ նշանակում է, որ կողմերի միջև ձևավորվել են մասնավոր հարաբերություններ, որոնց կանոնակարգումը կրում է մասնավոր (քաղաքացիաիրավական) բնույթ, ուստի այդ հարաբերությունների կապակցությամբ առաջացած վեճը ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի, իսկ 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

Դատարանն ընդգծում է, որ վարչական մարմինների ոչ բոլոր գործողություններն են վարչարարություն, իսկ նրանց ու որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջև ձևավորված ոչ բոլոր հարաբերություններն են հանրային բնույթ կրում: Հետևապես, անկախ այն հանգամանքից, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 40/5 հասցեի անշարժ գույքը իրացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ, սակայն դրան հաջորդող գործողությունը՝ սակարկությունների արդյունքների մասին «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ին արձանագրությունը կազմելը և ստորագրելը, իր բնույթով վարչարարություն չէ: Հետևապես այդ արձանագրության իրավաչափությունը ենթակա է ստուգման ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այլ

քաղաքացիական իրավունքի նորմերով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

(...)

Նման պայմաններում բանաձևելով, որ հայցադիմումի հիմնական՝ «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջով, վեճն իր էությամբ քաղաքացիական է, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հայեցակարգի հաշվառմամբ Արթուր Հրայրի Մալիասյանի և Բելլա Մերուժանի Հախվերդյանի պահանջով գործը պետք է վերահասցեագրել համապատասխան ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան»:

5. Թիվ ՎԴ/11768/05/21 գործը 2021 թվականի դեկտեմբերի 20-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ.Վարդանյանին:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Վարդանյան) 2022 թվականի հունվարի 7-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունը. *«(...) անդրադառնալով ներկայացված պահանջներին՝ Դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին արձանագրություն» վերտառությամբ փաստաթուղթը որևէ իրավական հետևանքներ, այդ թվում կազմակերպված և իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասով, չառաջացնող փաստաթուղթ է, հետևաբար չէր կարող հանգեցնել Հայցվորների*

իրավունքների հնարավոր խախտման և/կամ դրա արդյունքում իրենց համար անբարենպաստ հետևանքների առաջացման:

Ավելին, «Հայցապահանջը» վերտառությամբ բաժնի 2-րդ մասում ճիշտ է պահանջը ունի հետևյալ ձևակերպումը. «(...) անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 4-ի արձանագրությունը», սակայն հայցադիմումի բովանդակությունից հետևում է, որ Հայցվորները հայցադիմումով, ըստ էության, ոչ թե վիճարկում են «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին արձանագրություն» վերտառությամբ փաստաթղթի վավերությունը, այլ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարկադիր էլեկտրոնային աճուրդի ընթացքում իրականացված ոչ պատշաճ վարչարարությունը:

Վերոգրյալում արտահայտած իրավական դիրքորոշումներն ամփոփելով՝ Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ներկայացված պահանջներից հիմնական պահանջը 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջն է, այլ ոչ թե 2021 թվականի հոկտեմբերի 4-ի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» արձանագրությունն անվավեր ճանաչելու մասին պահանջը, քանի որ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջի բավարարումը կամ մերժումն է կանխորոշում մնացած պահանջների լուծումը:

(...)

Քննարկվող պարագայում Դատարանն արձանագրում է, որ քննության ենթակա հիմնական պահանջով վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է և «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին է, հիմնական պահանջի հիմքում ընկած վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, հիմնական պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի՝ դատական ակտի կատարման ապահովմանը: Այսինքն՝ տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հարկադիր կատարման վարույթում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, կատարելով օրենքով սահմանված իր պարտականությունը, կազմակերպել և իրականացրել է բնակելի տան հարկադիր էլեկտրոնային աճուրդը, իսկ վեճն առաջացել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իր հանրային իշխանական այդ լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ, հետևաբար՝ Արթուր Մալխասյանի և Բելլա Հախվերդյանի կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից»:

7. Թիվ ՎԴ/11768/05/21 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունվարի 19-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին 2021 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 013fiAq02837417-21/1 արձանագրությամբ նշվել է հետևյալը. *«... լոտի անվանումը՝ բնակելի տուն, Երևան, Կենտրոն, հասցե՝ Կենտրոն, Աբովյան փողոց, թիվ 40/5, մակերես՝ 166.5քմ, սենյակների քանակը՝ 4, հարկայնություն՝ 1,*

սեփականության վկայական՝ 29102012-01-1449, կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0105-0165, ունի պատշգամբ, պատերը՝ տուֆ քարից, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, հիմքը՝ միաձույլ երկաթբետոն, տանիքը՝ թիթեղյա, պատուհանները և ներսի դռները՝ փայտյա, հատակը՝ մանրատախտակ և սալիկապատ, պատերը՝ ջրաէմուլսիոն ներկանյութ, խոհանոցի պատերի մի մասը՝ սալիկապատված, մի մասը՝ ջրաէմուլսիոն ներկանյութ, հատակը՝ սալիկապատ, սանհանգույցի հատակը և պատերը՝ սալիկապատ: Ունկա են՝ քարե ավտոտնակ՝ 49.2քմ, մետաղական ավտոտնակ՝ 18.6քմ, խորդանոց՝ 3.8քմ, ինքնակամ կառուցված շինություն՝ 21.7քմ: Սեփականության իրավունքով, բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատմամբ հողամաս՝ 231.2քմ, մակերևույթը՝ հարթ, սահմանազատված է պարսպով: Լոտի մեկնարկային գինը՝ 42537150, լոտ վաճառքի գինը՝ 42637150, աճուրդի սկիզբը (օրը, ժամը)՝ 2021 թվականի սեպտեմբերի 22՝ ժամը 14:26, աճուրդի ավարտը (օրը, ժամը)՝ 2021 թվականի հոկտեմբերի 4՝ ժամը 14:26, պարտապան՝ Բելլա Հախվերդյան, Արթուր Մալխասյան, հաղթող մասնակից՝ Հայկ Գրիգորյան»:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին կազմված արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջը ծագում է հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերություններից:*

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

12. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

13. Սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց

քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավական հետևանքներ:

14. Այսպես՝ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

15. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ*[1]:

16. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կազմվող արձանագրությանը վերաբերող իրավական նորմերը: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Սակարկություններում հաղթած անձը և սակարկությունների կազմակերպիչն աճուրդ կամ մրցույթ անցկացնելու օրն ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրություն, որն ունի պայմանագրի ուժ (…):*

17. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (…) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան»:*

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե սակարկություններով վաճառվելիք լուրն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

նրան են անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը»:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Լոտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված»:*

Նշված օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Աճուրդում հաղթած մասնակիցը և հարկադիր կատարողն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (…)»:*

18. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի դատական կարգով վիճարկման առանձնահատկություններին անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *Դեզդեմոնա, Էդիկ, Գոհար, Ստեփան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյաններն, Անահիտ Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ քաղաքացիական գործով 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման մասին*[2]: Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«(…) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Ծառայությունը՝ որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ սակարկություններով վաճառելու և այն*

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԿԴ3/0174/02/14 որոշումը:

հեռագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկությունների, որտեղ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում սակարկությունները կազմակերպվում և անց են կացվում Ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան: (...) տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հարկադիր կատարման վարույթում Ծառայությունը, կատարելով օրենքով սահմանված իր պարտականությունը, կազմակերպել և իրականացրել է բնակարանի հարկադիր էլեկտրոնային աճուրդը, իսկ վեճն առաջացել է Ծառայության կողմից իր հանրային իշխանական այդ լիազորություններն իրականացնելու կապակցությամբ: Հետևաբար կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ»:

19. Սույն որոշման 16-18-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացն իրենից ներկայացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իրականացվող վարչարարություն, որն ավարտվում է սակարկությունների արդյունքների մասին հաղթողի և կազմակերպչի կողմից արձանագրության ստորագրմամբ, որպիսի պահից աճուրդում հաղթող ճանաչված մասնակցին, ով ստորագրում է արձանագրությունը, անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը: Վերոգրյալից հետևում է, որ սակարկությունների

արդյունքների մասին արձանագրություն ստորագրելու գործողությամբ եզրափակվում է, ամփոփվում է վարչական մարմնի՝ տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, այսինքն՝ վարչարարությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սակարկությունների արդյունքների մասին արձանագրություն ստորագրելու գործընթացը եզրափակում է վարչական մարմնի կողմից իրականացվող վարչարարությունը, ապա այն նույնպես բխում է հանրային իրավահարաբերություններից:

Ավելին, սույն գործով հայցի փաստական հիմքում վկայակոչված հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորների կողմից վիճարկվում է ոչ թե սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, այլև դրա կազմմանը նախորդող՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և իրականացման կապակցությամբ ձեռնարկված գործողությունների իրավաչափությունը *(օրինակ՝ աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի և փորձագետ նշանակելու վերաբերյալ որոշման մասին հայցվորներին ծանուցելու պարտականության պատշաճ կատարումը):* Հետևաբար, սույն գործով վեճի ենթակայությունը որոշելիս Վարչական դատարանը ոչ միայն պետք է հիմք ընդուներ հայցապահանջի ձևակերպումը, այլև ի հիմնավորումն այդ հայցապահանջի՝ հայցադիմումում վկայակոչված փաստական հանգամանքները: Ավելին, սույն գործով ներկայացված հայցապահանջի ոչ հստակ ձևակերպված լինելու հանգամանքն ինքնին չի կարող բացառել վեճի՝ հանրային իրավահարաբերություններից բխելու հանգամանքը՝ նկատի ունենալով Վարչական դատարանի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու

պարտականությունը, որը բխում է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակությունից:

Վերոնշյալ եզրահանգումը հիմնավորվում է նաև Վճռաբեկ դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակության և դրա կենսագործման վերաբերյալ մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշումներով[3]:

20. Այսպիսով՝ սույն գործով Արթուր Մալխասյանի, Բելլա Հախվերդյանի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ծագած վեճը վերաբերում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից անցկացված հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում կատարված գործողությունների (անգործության) իրավաչափությանը, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Արթուր Մալխասյանի, Բելլա Հախվերդյանի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ծագած իրավական վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/11768/05/21 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/11768/05/21 գործն ըստ հայցի Արթուր Մալխասյանի և Բելլա Հախվերդյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2021 թվականի

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի թիվ ՎԴ/0229/05/15 և 2017 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ/3804/05/15 որոշումները:

հոկտեմբերի 4-ի արձանագրությունն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը (լոտի կոդ՝ 1486) ու այդ հիմքով 2021 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը և Հայկ Գրիգորյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**